ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 0306/1819 04.06.2018թ.

ՀՀ ոստիկանության պետ,
ոստիկանության գնդապետ
պարոն՝ Վ. Օսիպյանին

Հարգելի պարոն Օսիպյան,

Սույն թվականի մայիսի 20-ին Դիտորդական խումբն այցելություն կատարելով Լոռու մարզային վարչության Սպիտակի ՁՊՎ, արձանագրել է մի շարք խախտումներ:

Դրանք են՝

Ա.Ա.Մ. ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի ձերբակալվել է 27.02.18թ. ժամը 19:12-ին և ՁՊՎ է ընդունվել 27.02.18թ. ժամը 12:30-ին: Դիտորդական խումբը մտածելով, որ ձերբակալման և ՁՊՎ ընդունվելու ժամերը հնարավոր է տեղերով սխալ գրված լինի, կատարեց համապատասխան ուսումնասիրություն: Ուսումնասիրության արդյունքնում պարզվեց, որ ըստ <<Խցերից դուրս բերման>> գրանցամատյանի տվյալ ձերբակալվածը 27.02.18թ. ժամը 14:15-ից մինչ 14:20-ը դուրս է բերվել խցից և տեղափոխվել զուգարան: Դիտորդական խմբի այն մտավախությունը, որ հնարավոր է սխալ լրացված լիներ գրանցամատյանը հերքվեց և նշված գրառման վերաբերյալ վարչակազմը չկարողացավ տալ որևէ մեկնաբանություն:

Ն.Ս.Ք.-ի վերաբերյալ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում գրացված է, որ 22.04.18թ. 21:10-ին ընդունվել է ՁՊՎ: Մեր այն հարցադրմանը, որ հնարավոր է դա լինի բերման ենթարկելու կամ ձերբակալելու ժամը, հերթապահ մասի պետը հերքեց և պնդեց, որ ոչ՝ դա ՁՊՎ մուտք գործելու ժամն է: Հավելենք, որ մեկ ժամ անց 22:11-ին նշված անձը ստացել է բուժօգնություն հրավիրված շտապ օգնության կողմից, բայց <<Խցերից դուրս բերման>> գրանցամատյանում տվյալ ձերբակալվածին խցից դուրս բերելու վերաբերյալ չկար ոչ մի գրառում և հերթապահ մասի պետը մեկնաբանեց, որ նշված բուժօգնությունը ցուցաբերվել է նախքան ՁՊՎ մուտք գործելը: Այսինքն, ձերբակալվածին ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի մուտքագրել են, բայց խուց չեն մտցրել, տվյալ դեպքում անհասկանալի է ձերբակալվածը մեկ ժամ որտեղ է եղել:

Խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն դրանց վերաբերյալ:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Հովհաննիսյան